ԳԼՈՒԽ

6

ՄՈԴՈՒԼ ԵՎ ՔԱՌԱԿՈՒՍԻ ԱՐՄԱՏ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐ

§4 ՔԱՌԱԿՈՒՍԻ ԱՐՄԱՏ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Գիտելիք, արժեք

1. Հինգ ընկերներ երեք կապիկների ուղեկցությամբ գնում են ընկույզ հավաքելու: Վերադարձին հանդիպում են երկու մտերիմ ընկերների, և բոլորը միասին գիշերում են, որպեսզի առավոտյան բաժանեն ավարը: Գիշերվա ընթացքում մեկը արթնանում է, երկուական ընկույզ տալիս կապիկներին, այնուհետև վերցնում է $1/7$-ը և քնում: Նույն կերպ են վարվում ընկույզ հավաքող մնացած չորս ընկերները: Գործին չմասնակցած ընկերներն այդպիսի արարք իրենց թույլ չեն տալիս: Առավոտյան արթնանում են, երկուական ընկույզ տալիս կապիկներին որպես գիշերավարձ, մնացածը հավասարապես բաժանում յոթ ընկերների միջև: Առնվազն քանի՞ ընկույզ էին հավաքել: